Արձանագրություն N 2

ՀՀ Արագածոտնի մարզի Ներքին Բազմաբերդի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀԱՄ-ՆԲՀ-ԳՀԱՇՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի մասին

Գ.Ն.Բազմաբերդ **«12» մայիսի 2020թ.**

Ժամը՝ 13:00

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝	**Մարո Հովհաննիսյան – Ներքին Բազմաբերդ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար**
Հանձնաժողովի անդամներ՝	**Մկրտիչ Կարապետյան - Ներքին Բազմաբերդ համայնքի ավագանի** **Գարուշ Գրիգորյան- Ներքին Բազմաբերդ համայնքի մշակույթի տան տնօրեն**
Գնումները համակարգող՝	**Կարեն Հովսեփյան**

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1.Գնման առարկայի նախահաշվայի գինը

ՀՀ Արագածոտնի մարզի Ներքին Բազմաբերդ համայնքի կարիքների համար հայտարարված **ՀՀԱՄ-ՆԲՀ-ԳՀԱՇՁԲ-20/11** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է

ՀՀ դրամ

1	*ՀՀ Արագածոտնի մարզի Ներքին Բազմաբերդ համայնքի արտաքին ջրամատակարման համակարգի 300մ3 ՕԿՋ-ի վերանորոգման աշխատանքներ*	18102600

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀ Արագածոտնի մարզի **Արագածոտնի համայնքապետարանի** կարիքների համար կազմակերպված **ՀՀԱՄ-ՆԲՀ-ԳՀԱՇՁԲ-20/11** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը և էլեկտրոնային հասցեն
«Շինաշխարհ» ՍՊԸ	ՀՀ Ք,Երևան Գոգոլի նրբանցք 32/1 Հեռ. 094291945 Email: armshinashkarh@mail.ru
«Արտեզիա» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ գ.Արտիմետ հեռ 091420443 Email:art.artezia@mail.ru
«Մոդուլ» ՍՊԸ	

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ՝ հետևյալ դեպքերի.

- ***«Մոդուլ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված ծրարի վրա բացակայում էր այն ներկայացնողի կամ վերջինիս լիազորած անձի ստորագրությունները:***

Համաձայն <Գնումների մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը:

Համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝ պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն), մրցույթի ծածկագիրը, «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Համաձայն <Գնումների մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Հաշվի առնելով վերոնշյալը գնահատող հանձնաժողովը որոշեց «Մոդուլ» ՍՊԸ-ի, կողմից ներկայացված հայտերը մերժել, իսկ ներկայացված ծրարները նույնությամբ, առանց բացելու վերադարձնել մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մյուս մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

5. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	ինքնարժեք	շահույթ	ինքնարժեքի և շահույթի հանրագումար	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գին
	Չ/Հ1				
«Շինաշխարհ» ՍՊԸ	11510711	1266178	12776889	2555378	15332267
«Արտեզիա» ՍՊԸ	11864847	1303153	13168000	2630000	15780000

*6.**Չկայացած չափաբաժինների վերաբերյալ**:*

Չկայացած չափաբաժիններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3 դեմ – 0

*7.**Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել**:*

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

8. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

8.1 ներկայացված ընդհանուր գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժինի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվում **«Շինաշխարհ» ՍՊԸ** –ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտեր և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:

Բավարար գնահատված մյուս մասնակիցները հայտարարվեցին հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ:

8.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանված կարգով ընտրված մասնակցին ծանուցել.պայմանագիր կնքելու մասին:

8.4 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան ընտրված մասնակցի հետ համապատասխան պայամանագիր կնքելու օրվան հաջորդ աշխատանքային օրը ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	**Մարո Հովհաննիսյան**
հանձնաժողովի անդամներ՝	_____	**Մկրտիչ Կարապետյան**
	_____	**Գարուշ Գրիգորյան**
Գնումները համակարգող՝	_____	**Կարեն Հովսեփյան**